9.

ԳԼԱՁՈՐԻ ԲԱՐՁՐ ԴՊՐՈՑԸ ԿԱՄ «ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»Ը

Պռոշեանց տոհմի պարծանքը՝ հոգեւոր-քաղաքակրթական կեանքի զարգացման նկատմամբ՝ Գլաձորի դպրոցն է. այս վանքի պատմութիւնը տարօրինակ սկիզբ և վախճան ունի. անյայտութիւնից յանկարծ երևան է գալիս ԺԴ. դարի ութսունական թուականի սկզբում իբրև արևելեան Հայաստանի մտաւոր կեդրոնը, և յանկարծ չքանում անյայտութեան մէջ ԺԴ. դարի կէսին։ Անորոշ է նոյն իսկ տեղը. այն աւերակները, որոնք Գլաձորի մնացորդները պիտի լինին, չնչին են, նիւթի հետ կապ չունեցող և ոչինչ չլուսաբանող երկու արձանագրութեան բեկորներով (պատկ. 8)։ Եկեղեցին շինուած է հասարակ քարով, չրջապատում էլ չկան ընդարձակ աւերակներ, ինչպէս ենթադրել կարելի էր վանքի մեծ հռչակից. Գլաձորը հին վանք չէր, այլ նորա ծագումն ու գոյութիւնը կապուած էր դպրոցական նպատակների հետ։ ԺԴ. դարի կէսերից առաջ խմբագրուած կամ յաւելումներով ճոխացրած Վարդանի Աշխարհացոյցը(*), բնորոշում է այդ վանքն էլ միայն իբրև վարժարան կամ վարդապետարան. Վայոց ձորի ուրիշ վանքերի հետ հեղինակը յիշում է «եւ Գայլուձոր, ուր վարժարանն է եւ աբոռ սբ. վարդապետացն մերոց»։ Ցիշատակա-



Պատկեր 195.

(*) Ձեռ. Էջմ. № 2179/2166։ № 358 նժ։